Digitally signed by
GHAZARYAN ZHANNA 6705820381
Date: 14.06.2024 18:19:49

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

# ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Հիմնադրամի հոգաբարձուների**
**խորհրդի 14-06-2024 թ. որոշմամբ**
**««ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»**

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին**

| | | |
|---|---|---|
| **1. Հիմնադրամի՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ |
| 1.2 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆ ՓՈՂՈՑ 73 |
| 1.3 Պետական գրանցման համարը | | 222.160.00563 |
| 1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2005-12-27 |
| 1.5 ՀՎՀՀ-ն | | 00444629 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)10530904 |
| | | +(374)91429835 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | http://www.armenic.am/ |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | info@armenic.am |
| **2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝** | | |
| | | |
| **3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝** | | |
| | | |
| **4. Կառավարչի անուն, ազգանուն՝** | | |
| Գայանե Հարությունյան | | |
| **5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը** | 10 | |
| **6. Անձեռնմխելի կապիտալի չափը** | | |
| **7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ** | | |
| **8. Ֆինանսավորման աղբյուրները՝** | | |
| 8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի | 8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը | 8.3 Չափը |
| 8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր | | |
| | Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ ծրագիր | 43,113,500 |
| 8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր | | |

| | | |
|---|---|---|
| | Դասընթացների առցանց կատալոգներ և տվյալների բազաներ թափանցիկության և ճանաչման համար-OCTRA2 դրամաշնորհային ծրագիր | 2,803,127 |
| | Կրթության շահագրգիռ կողմերին զինել կոմպետենցիաներով կեղծարարությունների բացահայտման և դրանց դեմ պայքարելու համար-DETECTդրամաշնորհային ծրագիր | 10,984,780 |
| | Միկրո-որակավորումները Վրաստանի և Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում -Հարավային Կովկասի փարոս-MICRO-GEAR | 13,669,082 |
| 8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր | | |
| | | |
| **9. Հիմնադրի ներդրումը՝** | | |
| 9.1 Դրամական միջոցներ | | |
| 9.2 Գույք | 9.2.1 Տեսակը | 9.2.2 Արժեքը |
| | | |
| **10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները** | | |
| 10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝ | 10.2 Նվիրված/նվիրաբերված գույք | |
| | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ | | |
| | | |
| 10.1.2 Իրավաբանական անձինք | | |
| | | |
| 10.1.3 Ֆիզիկական անձինք | | |
| | | |
| **11. Իրականացված ծրագրերը՝** | | |
| 11.1 Ծրագրի անվանումը | 11.2 Ծախսված գումարը | |
| Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ ծրագիր | 43,190,795 | |
| Դասընթացների առցանց կատալոգներ և տվյալների բազաներ թափանցիկության և ճանաչման համար-OCTRA2 դրամաշնորհային ծրագիր | 2,304,650 | |
| Կրթության շահագրգիռ կողմերին զինել կոմպետենցիաներով կեղծարարությունների բացահայտման և դրանց դեմ պայքարելու համար-DETECTդրամաշնորհային ծրագիր | 14,061,653 | |
| **12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը** | 61,175,198 | |
| **13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը** | 59,557,098 | |

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը` ___22___էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն ____________________________________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ____________________________________________

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ , ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Հեռ: (010) 57 28 46
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,
ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ -02.08.2006թ, ՏՐՎԱԾ Է ԱՆԺԱՄԿԵՏ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ՝ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳՀ 1 20 0440

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

***Ներկայացվում է «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին***

## Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

## Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

## Այլ հանգամանք

Հիմնադրամի 2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2023թ.-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական,

երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

***27 մայիսի 2024թ.***

*Գլխավոր տնօրեն՝* *Մելիք Պետրոսյան*

*Աուդիտոր՝* *Արփինե Արաքյան*

## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

*2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

| Հազար դրամ | Ծան. | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 17 308 | 17 218 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 1 474 | 1 981 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **18 782** | **19 199** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 6 | 244 | 60 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 7 | 3 559 | 1 216 |
| Ֆինանսական ներդրումներ | 8 | 7 580 | 7 580 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 9 | 25 680 | 10 440 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **37 063** | **19 296** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **55 845** | **38 495** |
| **ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **2023թ դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար** | | | |
| Կանոնադրական կապիտալ | | 50 | 50 |
| Կուտակված արդյունք | | 13 107 | 9 825 |
| **Ընդամենը զուտ ակտիվներ** | | **13 157** | **9 875** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 10 | 18 781 | 19 199 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **18 781** | **19 199** |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 11 | 952 | 1 111 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 10 | 17 390 | 2 995 |
| Ընթացիկ պահուստներ | 12 | 5 565 | 5 315 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **23 907** | **9 421** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **55 845** | **38 495** |
| | | - | - |

Գլխավոր տնօրեն՝ Գայանե Հարությունյան

Գլխավոր հաշվապահ՝ Ժաննա Ղազարյան

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2024թ. մայիսի 27-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ միասին: (էջ 9-24)*

# Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

*2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

| Հազար դրամ | Ծան. | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|---|
| **Շարունակվող գործունեություն** | | | |
| Ծնողներից եկամուտներ | 13 | 59 667 | 50 073 |
| Վարչական ծախսեր | 14 | (60 355) | (53 996) |
| Այլ եկամուտներ | 15 | 4 091 | 5 106 |
| Այլ ծախսեր | 15 | (223) | (178) |
| Ֆինանսական եկամուտներ | 16 | 647 | 638 |
| Այլ օգուտներ և կորուստներ | 17 | 308 | 46 |
| **Զուտ շահույթ (վնաս) մինչև շահութահարկով հարկումը** | | **4 135** | **1 689** |
| Շահութահարկի գծով ծախս | | (853) | (996) |
| **Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)** | | **3 282** | **693** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | - | - |
| **Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք** | | **3 282** | **693** |

Գլխավոր տնօրեն՝ Գայանե Հարությունյան

Գլխավոր հաշվապահ՝ Ժաննա Ղազարյան

*Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-24)*

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

*2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

| Հազար դրամ | Կանոնադրական կապիտալ | Չբաշխված շահույթ (չծածկված վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|
| **2022թ. հունվարի 1-ի դրությամբ** | | **9 182** | **9 182** |
| Ներքին շարժ | 50 | (50) | - |
| Տարվա զուտ շահույթ (վնաս) | | 693 | 693 |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **50** | **9 825** | **9 875** |
| **2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | **50** | **9 825** | **9 875** |
| Տարվա զուտ շահույթ (վնաս) | | 3 282 | 3 282 |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **50** | **13 107** | **13 157** |

Գլխավոր տնօրեն՝ Գայանե Հարությունյան

Գլխավոր հաշվապահ՝ Ժաննա Ղազարյան

*Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսա հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-24)*

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

*2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

| *Հազար դրամ* | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը** | **10 440** | **12 919** |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ, այդ թվում՝ | 71 706 | 45 886 |
| Ստացված դրամաշնորհ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից | 43 114 | 43 114 |
| Այլ մուտքեր | 4 062 | 5 057 |
| Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ | (35 391) | (32 788) |
| Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ | (11 257) | (9 553) |
| Վճարված այլ հարկեր և պարտադիր վճարներ | (12 286) | (10 443) |
| Այլ վճարումներ | (180) | (15) |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **16 654** | (1 856) |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Տոկոսների ստացումից մուտքեր | 648 | 560 |
| Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռք բերումից ելքեր | (2 062) | (990) |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(1 414)** | **(430)** |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր** | | |
| Փոխառության ստացումից մուտքեր | | |
| Փոխառության մարումից ելքեր | | |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | - | - |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | **15 240** | (2 286) |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | - | (193) |
| **Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը** | **25 680** | **10 440** |

Գլխավոր տնօրեն՝ Գայանե Հարությունյան

Գլխավոր հաշվապահ՝ Ժաննա Ղազարյան

*Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ միասին: (էջ 9-24)*

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## *1. Ընդհանուր տեղեկություններ*

### 1.1 Հիմնադրամի մասին

«Ակադեմիական փոխանակման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հանդիսանում է ոչ առևտրային կազմակերպություն, որը ստեղծվել է ՀՀ Կառավարության 2005 թվականի մարտի 31-ի N699-Ն որոշմամբ։ Հիմնադրամի կանոնադրությունը գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնական մարմնի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 27-ին։ Պետական գրանցման վկայականի համարն է 03Ա 070272, գրանցման համարն է 222.160.00563։

Հիմնադրամի կանոնադրության վերջին փոփոխությունը գրանցվել է 2022թ. հուլիսի 11-ին։

Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած են Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից տրված ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ կենտրոնների գործունեության և ծառայությունների մասին միասնական (եվրոպական) կանոնակարգի հիմնադրույթները։

Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 00444629։

Հիմնադրամի իրավաբանական և գործունեության վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0070, Միհրան Վրացյան 73։

Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- *Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը,*
- *Հիմնադրամի գլխավոր տնօրենը։*

Հիմնադրամի հիմնական շահառուներն են՝ ուսանողները, գործատուները, ծնողները, ուսուցիչներն ու դասախոսները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, պետական կառավարման մարմինները և շահագրգիռ այլ անհատներ։

Հիմնադրամը ՀՀ կառավարության, կրթական հաստատությունների և միջազգային կառույցների ներդրումների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է կրթական հանրօգուտ նպատակներ։

Հիմնադրամի նպատակներն են՝

- բարձրագույն ուսումնական հաստատություններին, գործատուներին, մասնագիտական կազմակերպություններին և այլ շահագրգիռ կողմերին որակավորումների, կրթական համակարգերի և փոխճանաչման գործընթացների մասին համարժեք տեղեկատվության տրամադրումը,
- օգտագործելով գոյություն ունեցող չափանիշները և ընթացակարգերը՝ շահագրգիռ կողմերին երաշխավորությունների, ըստ անհրաժեշտության՝ նաև փոխճանաչման մասին եզրակացության տրամադրումը՝ որակավորումների գնահատման արդյունքների հիման վրա,
- քաղաքացիներին փոխճանաչման հարցերով իրավունքների մասին տեղեկատվության տրամադրումը,
- ազգային մակարդակում բարձրագույն կրթության որակավորումների, ինչպես նաև բարձրագույն կրթության մուտքն ապահովող փաստաթղթերի ճանաչման մասին հավաստի տեղեկատվության տրամադրումը,
- բարձրագույն կրթության քաղաքականության և օրենսդրության մշակմանը մասնակցությունը ազգային և միջազգային մակարդակներում,
- ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ ցանցերի շրջանակներում բարձրագույն կրթության եվրոպական տարածքի որակավորումների համընդգրկուն կառուցվածքի մշակմանը նպատակաուղղված համագործակցությունը,
- երկրի կրթական համակարգի մասին տեղեկատվական և այլ նյութերի մշակմանը, հրապարակումներին, պարզաբանումներին, համեմատական հետազոտություններին մասնակցությունը՝ նախաձեռնված Եվրախորհրդի, Եվրոպական հանձնաժողովի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից,
- տարբեր երկրների կրթական համակարգերի մասին, նրանց կողմից տրվող որակավորումների, դրանց՝ Հայաստանի Հանրապետության որակավորումների համապատասխանության, փոխճանաչման բնագավառի օրենսդրության, պետական հավատարմագրված ուսումնական հաստատությունների և դրանց ընդունելության պահանջների մասին տեղեկատվության հավաքումը և պարբերական նորացումը,

- ազգային կրթական համակարգի մասին, համաձայն երաշխավորված ձևերի, տեղեկատվության կազմումը, հաստատումը և պարբերական թարմացումը,
- դիպլոմի ներդիրում ներառվող ազգային կրթական համակարգի բնութագրի մշակումը, դրա ներդրմանը նպաստելը:

Հիմնադրամը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ միայն այն դեպքում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար ստեղծվել է Հիմնադրամը և համապատասխանում է այդ նպատակներին:

Հիմնադրամի աշխատակիցների թվաքանակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 8 մարդ, 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9 մարդ:

## 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

### 2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

Ներկայումս ՓՄԿ-ի ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացման հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՓՄԿ-ի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

### 2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար Հիմնադրամի կողմից ընդունված չափման հիմունքը է հանդիսանում սկզբնական արժեքը, որը սովորաբար համակցվում է այլ չափման հիմունքների հետ: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Հիմնադրամը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

### 2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

### 2.4 Դատողությունների գնահատականների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ների պահանջների համաձայն պատրաստելու համար Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացման, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

### 2.5 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում, և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

### 2.6 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի, և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից։

## *3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը*

### 3.1 Շնորհներ

Հիմնադրամը որպես շնորհ հաշվառում է ստացված միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով։ Շնորհների կազմում Հիմնադրամը հաշվառում է անհատույց ստացվող միջոցները, նվիրատվությունները։

Հիմնադրամը որպես շնորհ միջազգային և տեղական շնորհատու կազմակերպություններից ստանում է դրամական միջոցներ հիշյալ ծրագրերի իրականացման համար։

Շնորհները ճանաչվում են որպես եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսերը, որոնց համար ստացվել են այդ շնորհները։ Օրինակ՝ ամորտիզացվող (մաշվող) ակտիվներին վերաբերվող շնորհները ճանաչվում են որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում և այն համամասնություններով, ըստ որոնց հաշվարկվում է այդ ակտիվների մաշվածությունը։

Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա գումար (դեբիտորական պարտք)։

Երբեմն որոշակի պայմանների չկատարման դեպքում շնորհները դառնում են վերադարձման ենթակա։ Շնորհը, որը դառնում է վերադարձման ենթակա, հաշվառման մեջ արտացոլվում է որպես հաշվառման գնահատումների վերանայում։

Եկամուտներին վերաբերվող շնորհների վերադարձումը առաջին հերթին կատարվում է տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին։ Այնքանով, որքանով վերադարձման ենթակա գումարը գերազանցում է այդպիսի հետաձգված կրեդիտային մնացորդը, կամ եթե հետաձգված կրեդիտային մնացորդ չկա, ապա վերադարձումը անմիջապես ճանաչվում է որպես ծախս։

### 3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները։

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը։ Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն՝ երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Հիմնադրամի մտադրություններին համապատասխան։ Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս։

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են՝

| | |
|---|---|
| *Շենք, շինություններ* | *20-30 տարի* |
| *Մեքենաներ, սարքավորումներ,* | |
| *Արտադրական,տնտեսական գույք* | *5-9 տարի* |
| *Հաշվողական և համակարգչային տեխնիկա* | *1-5 տարի* |
| *Այլ հիմնական միջոցներ* | *5-9 տարի* |

### 3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվ է, որը զուրկ է ֆիզիկական սուբստանցիայից։

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն դեպքում, երբ՝

ա/ հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ և

բ/ ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել։

Հիմնադրամի կողմից ձեռք բերված այլ ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված մաշվածության գումարը ճանաչվում է որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

| | |
|---|---|
| *Համակարգչային ծրագրեր* | *10 տարի* |
| *Այլ ոչ նյութական ակտիվներ* | *3-10 տարի* |

### 3.4 Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով արտահայտված գործառնությունները ձևակերպվում են հայկական դրամով՝ գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով: Փոխարժեքային տարբերությունները հաշվեգրվում են ծախսերին և եկամուտներին:

### 3.5 Դրամական միջոցներ և համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

### 3.6 Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջին մուտք առաջին ելք» բանաձևով: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Պաշարների հնարավոր իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

### 3.7 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են օրինակ վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

### 3.8 Հասույթ

Հիմնադրամը պետք է հաշվառի գնորդի հետ պայմանագիրը միայն այն դեպքում, եթե բավարարվում են ստորև նկարագրված բոլոր չափանիշները՝

ա) պայմանագրի կողմերը հաստատել են պայմանագիրը (գրավոր, բանավոր կամ այլ սովորական բիզնես գործելակերպի համաձայն) և պարտավորվում են կատարել իրենց համապատասխան պայմանագրային պարտականությունները.

բ) հիմնադրամը կարող է որոշակիացնել փոխանցվող ապրանքներին կամ ծառայություններին վերաբերող յուրաքանչյուր կողմի իրավունքները.

գ) հիմնադրամը կարող է որոշակիացնել փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների վճարման պայմանները.

դ) պայմանագիրն ունի առևտրային բնույթ (այսինքն՝ պայմանագրի արդյունքում ակնկալվում է, որ կփոփոխվեն հիմնադրամի ապագա դրամական միջոցների հոսքերի հետ կապված ռիսկերը, ժամկետները կամ գումարը). և

ե) հավանական է, որ հիմնադրամը կստանա այն հատուցումը, որը հիմնադրամը իրավունք ունի ստանալու, գնորդին փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների դիմաց՝ որպես փոխանակում:

Հիմնադրամը պետք է ճանաչի հասույթ, երբ կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին: Ակտիվը համարվում է փոխանցված, երբ գնորդն այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում հսկողություն:

Երբ կատարման պարտականությունը կատարվում է, Հիմնադրամը պետք է ճանաչի որպես հասույթ գործարքի գնի այն մասը, որը վերագրվում է տվյալ կատարման պարտականությանը:

Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որը Հիմնադրամն ակնկալում է ստանալ որպես փոխանակում գնորդին խոստացված ապրանքները և ծառայությունները փոխանցելու դիմաց, բացառությամբ երրորդ կողմերի անունից հավաքագրված գումարների:

Հատուցումը, որը խոստացվել է գնորդի հետ կնքված պայմանագրով, կարող է ներառել հաստատուն գումարներ, փոփոխուն գումարներ կամ երկուսը միասին:

### 3.9 Հարկեր

*Շահութահարկ*

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից:

### 3.10 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ, երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվների բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել, կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Սկզբնական ճանաչման պահին Հիմնադրամը պետք է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափի իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Հիմնադրամի ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

Հիմնադրամը պետք է ճանաչի կորստի պահուստ՝ ակնկալվող պարտքային կորուստների գծով ֆինանսական ակտիվների, վարձակալության գծով դեբիտորական պարտքի, պայմանագրի գծով ակտիվի կամ փոխառության, հանձնառության և ֆինանսական երաշխավորության պայմանագրի համար, որոնց նկատմամբ կիրառվում են արժեզրկման պահանջները:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը պետք է ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող կորուստներին հավասար գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն մեծացել է:

Եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն չի մեծացել, Հիմնադրամը պետք է այդ ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

### 3.11 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Հիմնադրամը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք ըստ ակնկալության կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, բայց բացահայտվում են երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում, երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել: Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ, մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքրանա:

## 3.12 Կարևոր հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ

### *Ենթադրությունների և դատողությունների գնահատում*

ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Հիմնադրամի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ակտիվների պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի համար եկամուտների ու ծախսերի մեծության վրա:

Հիմնադրամը իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ: Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ ցուցանիշների վրա ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

### *Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ*

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, նման գործոնները՝ ինչպիսիք են գործառնական կամ տեխնիկական մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարությունը ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան:

Հիմնադրամի ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն, ապա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

### *Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը*

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Հիմնադրամը գնահատում է Հիմնադրամի ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Եթե պայմանները փոփոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքը ավելացել է, ապա արժեզրկման պահուստը ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Դեբիտորական պարտքի համար արժեզրկման պահուստը հիմնված է յուրաքանչյուր հաճախորդի հաշվի հավաքագրելիության գնահատականի վրա: Եթե կա հիմնական հաճախորդի վարկունակության նվազում, կամ, եթե իրական ժամկետանց գումարները ավելի շատ են, քան կանխատեսումները, իրական դեբիտորական պարտքերը կարող են տարբերվել այդ գնահատականներից:

Եթե ղեկավարությունը որոշում է, որ անհատապես գնահատվող դեբիտորական պարտքերի գծով, լինի դա էական, թե՝ ոչ, ոչ մի օբյեկտիվ հայտանիշ արժեզրկման համար չկա, այն ներառվում է դեբիտորական պարտքերում նման վարկային ռիսկի հայտանիշներ ունեցող դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է դրանց արժեզրկման խմբային գնահատում:

Խմբային արժեզրկման գնահատման նպատակով դեբիտորական պարտքերը խմբավորվում են միևնույն ռիսկի հայտանիշների հիման վրա: Այդ հայտանիշները վերաբերվում են խմբերի համար ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատմանը, որը ցույց է տալիս գնահատվող ակտիվի պայմանագրային պայմաններին համապատասխան գումարների վճարումները կատարելու ուղղությամբ դեբիտորի հնարավորությունը:

Արժեզրկման խմբային գնահատման ենթակա դեբիտորական պարտքերի խմբում ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատվում են պայմանագրային դրամական հոսքերի և համապատասխան ակտիվների ժամկետանց դառնալու գծով ղեկավարության փորձի հիման վրա, որը հետևանք է անցյալ ժամանակաշրջանի վնասի դեպքերի և ժամկետանց գումարների վերականգնման հաջողության:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմաններ ազդեցությունը արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

### *Հարկային օրենսդրություն*

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան գնահատումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

### *Ֆինանսական գործիքի իրական արժեք*

Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններում հաշվառվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը դուրս չի բերվում ակտիվ շուկայից, նրանց իրական արժեքը որոշվում է գնահատման մեթոդների օգնությամբ՝ ներառյալ դրամական հոսքերի զեղչման մոդելը: Մուտքային ցուցանիշները այս մոդելներում վերցվում են դիտարկելի շուկաներից, որտեղ դա հնարավոր է, իսկ որտեղ հնարավոր չէ՝ դատողությունների որոշակի աստիճան է անհրաժեշտ իրական արժեքները գնահատելու համար: Դատողությունները վերաբերում են այնպիսի մուտքային տվյալներին, ինչպիսիք են իրացվելիության ռիսկը, վարկային ռիսկը և փոփոխականությունը: Այս գործոնների վերաբերյալ ենթադրությունների փոփոխությունները կարող են ազդել ֆինանսական գործիքների հաշվառվող իրական արժեքի վրա:

## 4.Հիմնական միջոցներ

| Հազար դրամ | Վրացյան 73 տարածքի վերանորոգման ծախսեր | Մեքենաներ, սարքավորումներ | Տրանսպորտային միջոցներ | Տնտեսական գույք, այլ հիմնական միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **2022թ. հունվարի 1-ի դրությամբ** | 12 406 | 8 837 | 7 500 | 5 698 | 34 441 |
| Ավելացումներ | | | | 990 | 990 |
| Նվազեցումներ | - | (51) | - | (269) | (320) |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 12 406 | 8 786 | 7 500 | 6 419 | 35 111 |
| **2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | 12 406 | 8 786 | 7 500 | 6 419 | 35 111 |
| Ավելացումներ | | 835 | | 1 227 | 2 062 |
| Նվազեցումներ | | | - | | - |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 12 406 | 9 621 | 7 500 | 7 646 | 37 173 |
| ***Կուտակված մաշվածություն*** | | | | | |
| **2022թ հունվարի 1-ի դրությամբ** | 17 | 8 691 | 3 152 | 4 305 | 16 165 |
| Տարվա ծախս | 620 | 146 | 882 | 400 | 2 048 |
| Օտարումներ և դուրս գրումներ | - | (51) | | (269) | (320) |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 637 | 8 786 | 4 034 | 4 436 | 17 893 |
| **2023թ. հունվարի 1-ի դրությամբ** | 637 | 8 786 | 4 034 | 4 436 | 17 893 |
| Տարվա ծախս | 620 | 173 | 883 | 296 | 1 972 |
| Օտարումներ և դուրս գրումներ | | - | | | - |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 1 257 | 8 959 | 4 917 | 4 732 | 19 865 |
| ***Զուտ հաշվեկշռային արժեք*** | | | | | |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 11 769 | - | 3 466 | 1 983 | 17 218 |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | 11 149 | 662 | 2 583 | 2 914 | 17 308 |

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն: Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի: Հիմնադրամը 2022թ. հնկը ընդունելով Հիմնադրի կողմից ընդունված որոշումը և Հիմնադրամի տնօրենի հրամանը, կատարել է միջնեա-սարքավորումներում և այլ հիմնական միջոցներում հաշվառված ՀՀ-նների գույքագրում: Դուրս են գրվել այդ պահին զրոյական հաշվեկշռային արժեքով հաշվառվող հիմնական միջոցները:

ՀՀ Կառավարության 04 մարտի 2021թ. N315-Ն որոշման համաձայն Երևան քաղաքի Վրացյան 73 հասցեում գտնվող անշարժ գույքի առաջին հարկից 36 892 092 դրամ կադաստրային արժեքով 222.5 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքի անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ՀՀ Կառավարությունը տրամադրել է Հիմնադրամին:

Հիմք ընդունելով այդ որոշումը՝ ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեն և Հիմնադրամը 2021թ. ապրիլի 27-ին կնքել են ոչ բնակելի տարածքի (Վրացյան 73) անհատույց օգտագործման թիվ 18/0021 պայմանագիրը:

Այդ պայմանագրով նախատեսված է դրույթ այն մասին, որ Հիմնադրամը կարող է իրականացնել տարածքի անբաժանելի բարելավումներ՝ այդ մասին ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեի հետ նախապես գրավոր համաձայնեցնելու դեպքում:

Գրավոր համաձայնությունը ստանալուց հետո Հիմնադրամին ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվել է 14 269 700 դրամ ֆինանսական աջակցության գումար՝ Վրացյան 73 տարածքի վերանորոգման համար:

Վրացյան 73 հասցեի տարածքի վերանորոգման ծախսերի համար Հիմնադրամի կողմից օգտակար ծառայության ժամկետը սահմանվել է 20 տարի:

2023 և 2022 թվականների մաշվածության ամբողջ գումարը բաշխվել է վարչական ծախսերին:

## 5. Ոչ նյութական ակտիվներ

| Հազար դրամ | Համակարգչային ծրագրեր | Այլ ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Սկզբնական արժեք** | | | |
| **2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **555** | **2 730** | **3 285** |
| Ավելացումներ | | | - |
| Օտարումներ, դուրս գրումներ | | - | - |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **555** | **2 730** | **3 285** |
| **2023թ հունվարի 1-ի դրությամբ** | **555** | **2 730** | **3 285** |
| Ավելացումներ | | - | - |
| Օտարումներ, դուրս գրումներ | | - | - |
| **2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **555** | **2 730** | **3 285** |
| ***Կուտակված մաշվածություն*** | | | |
| **2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **278** | **492** | **770** |
| Տարվա ծախս | 62 | 472 | 534 |
| Նվազեցումներ | - | - | - |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **340** | **964** | **1 304** |
| **2023թ հունվարի 1-ի դրությամբ** | **340** | **964** | **1 304** |
| Տարվա ծախս | 50 | 457 | 507 |
| Նվազեցումներ | - | - | - |
| Վերադասակարգումներ | | | - |
| **2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **390** | **1 421** | **1 811** |
| ***Զուտ հաշվեկշռային արժեք*** | | | |
| **2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **215** | **1 766** | **1 981** |
| **2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **165** | **1 309** | **1 474** |

## 6. Պաշարներ

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Վառելիք | 244 | 60 |
| | **244** | **60** |

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամի պաշարների նկատմամբ սահմանափակումներ առկա չեն։

## 7.Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Այլ դեբիտորական պարտքեր | 3 389 | 1 160 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 38 | 56 |
| Դեբիտորական պարտքեր աշխատավարձի գծով | 132 | - |
| | **3 559** | **1 216** |

Այլ դեբիտորական պարտքերում հաշվառված է Հիմնադրամի կողմից «Կրթության շահագրգիռ կողմերին զինել կոմպետենցիաներով կեղծարարությունների բացահայտման և դրանց դեմ պայքարելու համար/DETECT» դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքների համար նախատեսված գումարի վերջնական մասը, որի փոխհատուցումը համաձայն պայմանագրի սահմանված է Եվրոպայի Խորհրդի կողմից վերջնական ֆինանսական հաշվարկների հաստատումից հետո։

## 8. Ֆինանսական ներդրումներ

| Հազար դրամ | Ընթացիկ | Ընդամենը |
|---|---|---|
| **2022թ հունվարի 1-ի դրությամբ** | **7 502** | **7 502** |
| Ավելացում | 638 | 638 |
| Պակասեցում | (560) | (560) |
| **2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **7 580** | **7 580** |
| Ավելացում | 648 | |
| Պակասեցում | (648) | |
| **2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **7 580** | **7 580** |

Ֆինանսական ներդրումները կարճաժամկետ բանկային ավանդներն են, որոնք Հիմնադրամի կողմից ներդրված են «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ում։ Հիմնադրամը այս կերպ է տեղաբաշխել իր ժամանակավորապես ազատ դրամական միջոցները։

## 9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Բանկային մնացորդներ | 25 679 | 10 439 |
| Կանխիկ միջոցներ | 1 | 1 |
| | **25 680** | 10 440 |

## 10. Շնորհներ

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| **Ակտիվներին վերաբերող շնորհներ** | | |
| Տարեսկզբի մնացորդ | **19 199** | **20 791** |
| Տարվա ընթացքում ստացված | | |
| Շնորհի վերադասակարգում | 2 062 | 990 |
| Ֆինանսական արդյունքներում արտացոլված | (2 480) | (2 582) |
| Փոխարժեքային տարբերություններ | | |
| Տարեվերջի մնացորդ | **18 781** | **19 199** |
| | | |
| **Եկամուտներին վերաբերող շնորհներ** | | |
| Տարեսկզբի մնացորդ | **2 995** | **4 673** |
| Տարվա ընթացքում ստացված | 70 571 | 45 886 |
| Շնորհի վերադասակարգում | 3 252 | 1 090 |
| Շնորհի վերադասակարգում՝ ակտիվներին վերաբերող | (2 062) | (990) |
| Ֆինանսական արդյունքներում արտացոլված | (57 187) | (47 489) |
| Փոխարժեքային տարբերություններ | (179) | (175) |
| Տարեվերջի մնացորդ | **17 390** | **2 995** |

Ստորև ներկայացնում ենք Հիմնադրամի 2023թ. ստացված դրամաշնորհների ֆինանսական աղբյուրներն ու ծրագրերը.

*Հազար ՀՀ դրամ*

| Հ/հ | Անվանում | Գումար |
|---|---|---|
| 1 | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից՝ «Ակադեմիական փոխանակման և շարժունության ծառայություններ» ծրագիր | 43 114 |
| 2 | «Դասընթացների առցանց կատալոգներ և տվյալների բազաներ՝ թափանցիկության և ճանաչման համար» (OCTRA 2) | 2 803 |
| 3 | «Կրթության շահագրգիռ կողմերին զինել կոմպետենցիաներով կեղծարարությունների բացահայտման և դրանց դեմ պայքարելու համար/DETECT» | 10 985 |
| 4 | Միկրո-որակավորումները Վրաստանի և Հայաստանի բարձրագույն կրթության համակարգերում: Հարավային Կովկասի փարոս (MICRO-GEAR) | 13 669 |
| | **Ընդամենը** | **70 571** |

## 11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 99 | 108 |
| Ստացված կանխավճարներ | - | 7 |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեին՝ շահութահարկ | 853 | 996 |
| | **952** | **1 111** |

Առևտրային կրեդիտորական պարտքերի մնացորդներում ներառված են Հիմնադրամի գործունեության իրականացման հետ կապված ընթացիկ սպասարկման ծառայությունների համար հաշվետու ամսաթվի դրությամբ հաշվեգրված գումարները

## 12. Ընթացիկ պահուստներ

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ | 5 565 | 5 315 |
| | **5 565** | **5 315** |

## 13. Շնորհներից եկամուտներ

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 2 480 | 2 581 |
| Եկամուտներին վերաբերող շնորհներ | 57 187 | 47 492 |
| | **59 667** | **50 073** |

## 14. Վարչական ծախսեր

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Աշխատավարձ | 33 853 | 33 553 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 2 480 | 2 581 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 8 843 | 9 331 |
| Փոստի, հեռահաղորդակցության ծախսեր | 635 | 766 |
| Գրասենյակային, կոմունալ ծախսեր | 1 018 | 664 |
| Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր | 1 000 | 806 |
| Բանկային և ապահովագրական ծախսեր | 149 | 98 |
| Չփոխհատուցվող հարկերից ծախսեր | 90 | 29 |
| Այլ ծախսեր՝ համաձայն ծառայությունների մատուցման պայմանագրերի | 12 287 | 6 168 |
| | **60 355** | **53 996** |

## 15. Այլ եկամուտներ, այլ ծախսեր

*Այլ եկամուտներ*

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| | | - |
| Մատուցված ծառայություններից եկամուտ | 4 087 | 5 106 |
| Այլ եկամուտ | 4 | - |
| | **4 091** | **5 106** |

*Այլ ծախսեր*

| Հազար դրամ | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| | | - |
| Արտարժույթի փոխարկումից ծախսեր | 219 | 178 |
| Այլ ծախսեր | 4 | - |
| | **223** | **178** |

## 16. Ֆինանսական եկամուտներ

Հազար դրամ

| | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտներ | 647 | 638 |
| | **647** | **638** |

## 17. Այլ օգուտներ և կորուստներ

| Հազար դրամ | 2023թ. | | 2022թ. | |
|---|---|---|---|---|
| | Եկամուտ | Ծախս | Եկամուտ | Ծախս |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից | 977 | 669 | 347 | 301 |
| | **977** | **669** | **347** | **301** |

## 18. Ֆինանսական գործիքներ

*Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ*

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.10-ում:

*Ֆինանսական գործիքների կատեգորիաները*

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

*Ֆինանսական ակտիվներ*

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Մնացորդներ դրամարկղում և բանկերում | 25 680 | 10 440 |
| Ֆինանսական ներդրումներ | 7 580 | 7 580 |
| | **33 260** | **18 020** |

*Ֆինանսական պարտավորություններ*

| Հազար դրամ | 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 99 | 108 |
| | **99** | **108** |

## 19. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում օգտագործելով ֆինանսական գործիքներ, ենթարկվում է շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերի:

### Ֆինանսական ռիսկի գործոններ

*ա) Շուկայական ռիսկ*

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

*Արտարժութային ռիսկ*

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված փոխառությունների, ձեռքբերումների և դրամաշնորհների հետ: Արտարժույթի ռիսկ հիմնականում առաջանում է Եվրոն:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամը ենթարկում են արտարժութային ռիսկի, ներկայացված են ստորև:

| Հազար դրամ | Եվրո՝ ՀՀ դրամով վերահաշվարկված 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| **Ֆինանսական ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 25 680 | 10 440 |
| Ֆինանսական ներդրումներ | 7 580 | 7 580 |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 99 | 108 |
| **Զուտ արդյունք** | **33 161** | **17 912** |

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ արտարժութային հաշիվների մնացորդների վերահաշվարկման համար Հիմնադրամի կողմից կիրառվել են հետևյալ փոխարժեքները՝

| | 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| 1 ԱՄՆ դոլար | 404,79 | 393,57 |
| 1 Եվրո | 447,90 | 420,06 |

*բ) Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը: Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է միջոցները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար Հիմնադրամը գրավ չի վերցնում: Բացի այդ Հիմնադրամը գրավ չի պահանջում նաև այլ ֆինանսական ակտիվների համար:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով

*Ենթարկվածությունը պարտքային ռիսկին*

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

| Հազար դրամ | Հաշվեկշռային արժեք 2023թ. | 2022թ. |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 25 680 | 10 440 |
| Ֆինանսական ներդրումներ | 7 580 | 7 580 |
| | **33 260** | **18 020** |

*գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Հիմնադրամի մոտեցումն է՝ ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար, առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Հիմնադրամի համբավը վտանգելու:

## 20. Պայմանականություններ

*Գործարար միջավայր*

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

Հիմնադրամի վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են լինել խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Հիմնադրամի իրացվելիության անկման, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ:

*Ապահովագրություն*

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրություն իր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից:

Քանի դեռ Հիմնադրամը չունի համապատասխան ապահովագրություն, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

*Իրավական միջավայր*

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի դեմ կամ Հիմնադրամի կողմից հարուցված դատական հայցեր չկան:

*Հարկային միջավայր*

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Հիմնադրամը գտնում է, որ համապատասխան պետական կարգավորող մարմինների կողմից մեկնաբանությունները կարող են ազդել Հիմնադրամի գործարքների և գործունեության վրա: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով, որի արդյունքում հնարավոր է, որ այն գործարքների և գործունեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախկինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին, լրացուցիչ հարկերը տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության՝ հարկային մարմնի կողմից հարկերի ստուգման համար հաշվետու տարվան նախորդող երեք տարիները բաց են:

Հիմնադրամի ղեկավարության կարծիքով 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը պատշաճ կերպով է կատարել համապատասխան օրենքների մեկնաբանությունները և Հիմնադրամի հարկային արժութային և մաքսային դրությունը կայուն է:

## 21. Գործարքներ կապակցված կողմերի միջև

ա) Հիմնադրամը իր հիմնադիր ՀՀ Կառավարությունից հաշվետու տարում ստացել է 43,114 հազար ՀՀ դրամ դրամաշնորհ՝ «Ակադեմիական փոխանակման և շարժունության ծառայություններ» ծրագրի իրականացման համար, իսկ 2022թ.-ին՝ 43,114 հազար ՀՀ դրամ:

բ) Հանգուցային կառավարչական անձնակազմը մեկն է՝ գլխավոր տնօրենը, որի քաղաքացիաիրավական պայմանագրերից և ԱՎՈՒՄ-ից ստացված գումարները 2023թ. կազմել է 13,272 հազար դրամ, իսկ 2022թ.՝ 12,726 հազար դրամ:

## 22. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտվող դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2023թ.) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը տեղի չեն ունեցել:

Գլխավոր տնօրեն՝ Գայանե Հարությունյան

Գլխավոր հաշվապահ՝ Ժաննա Ղազարյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 14.06.2024 17:37